

Օ Ր Ի Ն Ա Կ Ե Լ Ի Ձ Ե Վ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ

Ղեկավարվելով «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի դրույթներով, և նպատակ ունենալով խթանել սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացում բոլոր շահագրգիռ կողմերի՝ սոցիալական ծառայություններ տրամադրող մարմինների, կազմակերպությունների, ինչպես նաև ֆիզիկական անձանց, համագործակցության լիարժեք կայացումը, հետագա զարգացումն ու գործընկերային հարաբերությունների ձևավորումը, առաջնահերթ թիրախավորելով աղքատ, սոցիալապես անապահով, ինչպես նաև մեկուսացված խմբերի տնտեսական և սոցիալական խոցելիության նվազեցումը.

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի Սևանի սոցիալական աջակցության տարածքային գործակալությունը (այսուհետ՝ տարածքային մարմին) համագործակցության է հրավիրում մարզում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունիսի 4-ի N 582-Ն որոշման 5-րդ կետով հաստատված՝ իր սպասարկման տարածքում (այսուհետ՝ տարածաշրջան) գործող պետական կառավարման հանրապետական մարմինների տարածքային ստորաբաժանումներին և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններին, սոցիալական պաշտպանության ոլորտում գործող պետական և համայնքային, սոցիալական ծառայություններ տրամադրող այլ կազմակերպություններին, ինչպես նաև ֆիզիկական անձանց, որոնք՝ միանալով սոցիալական համագործակցության համաձայնագրին (այսուհետ՝ Համաձայնագիր), հայտնում են իրենց համաձայնությունը հետևյալի մասին՝ գործել Համաձայնագրի նպատակներին և սոցիալական աջակցության սկզբունքներին համապատասխան.

գործադրել լավագույն ջանքերը Համաձայնագրում և «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում (այսուհետ՝ օրենք) ամրագրված դրույթներն իրագործելու համար:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐԸ

1.1 Համաձայնագրի նպատակներն ու խնդիրներն են Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևանի տարածաշրջանում, սոցիալական ծրագրերի իրականացման ընթացքում ապահովել՝

1.1.1 սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացում՝ սոցիալական դեպքի վարման շրջանակներում, փոխգործակցության ապահովում, սոցիալական դեպքի վարման գործընթացի արդյունավետության մեծացում՝ Համաձայնագրի 2.1 կետում նշված մարմինների և անձանց ռեսուրսների արդյունավետ ներգրավմամբ և օգտագործմամբ.

1.1.2 ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման արդյունավետության մեծացում, սոցիալական ծառայությունների մատչելիության և որակի բարձրացում, ինչպես նաև կողմնորոշում՝ դեպի սոցիալական աջակցություն ստացողները.

1.1.3 սոցիալական աջակցության անհրաժեշտություն առաջացնող գործոնների, դրանց փոխկապակցվածության և պատճառահետևանքային կապերի բացահայտում, բացասական ազդեցության չեզոքացում.

1.1.4 կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի (ընտանիքի) օրինական շահերի պաշտպանություն և նման իրավիճակում հայտնվելու կանխարգելում.

1.1.5 սոցիալական համախմբվածության ամրապնդում՝ նվազեցնելով խոցելի խմբերի սոցիալական մեկուսացվածությունը.

1.1.6 արտակարգ իրավիճակներում, ինչպես նաև անհետաձգելի լուծում պահանջող՝ կյանքին և առողջությանը վտանգ սպառնացող, կյանքի դժվարին իրավիճակում (այսուհետ՝ արտակարգ իրավիճակ) հայտնված սոցիալական աջակցություն ստացողի խնդիրներին արագ արձագանքման, ինչպես նաև սոցիալական ծառայությունների անհապաղ տրամադրման հնարավորությունների ստեղծում:

1.1.7 աղքատ, սոցիալապես անապահով, ինչպես նաև մեկուսացված խմբերի տնտեսական և սոցիալական խնցելիության նվազեցում:

1.1.8 սոցիալական ոլորտում սոցիալական աշխատանքի դերի ու նշանակության բարձրացում:

1.1.9 վստահության մթնոլորտի, սոցիալական համերաշխության ձևավորում, և՛ հասարակության մեջ, և՛ աշխատանքում:

1.1.10 տարածաշրջանում սոցիալական պաշտպանության ոլորտում առկա խնդիրների վերհանում ու դրանց մասին բարձրաձայնելը:

1.1.11 մասնակցային գործընթացի ապահովում՝ մարզում (Երևանում) շահագրգիռ կողմերի հետ համակողմանի քննարկումների իրականացում:

2. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԿՈՂՄԵՐԸ

2.1 Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևանի տարածաշրջանում, համաձայնագրի կողմերն են իրավաձայնագրին միացած սուբյեկտները՝ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինները, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, սոցիալական ծառայություններ տրամադրող այլ կազմակերպությունները, ինչպես նաև ֆիզիկական անձինք (միասին նաև՝ Կողմեր):

3. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՈՐՀՐԴԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

3.1 Սոցիալական համագործակցության իրականացման աշխատանքները համակարգելու նպատակով Կողմերը ձևավորում են համակարգող խորհուրդ (այսուհետ՝ խորհուրդ):

3.2 Խորհրդի կազմում պարտադիր ընդգրկվում են տարածաշրջանում գործող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1061-Ն որոշման 1-ին կետով սահմանված սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների մեկական ներկայացուցիչ, ինչպես նաև սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների ներկայացուցիչներ և ֆիզիկական անձինք՝ ոչ ավելի հինգ անդամ:

3.3 Խորհուրդը գործում է խորհրդի անհատական կազմը ձևավորվելուց հետո 2 տարի ժամկետով:

3.4 Խորհրդի անհատական նոր կազմով գործունեությունը սկսվում է նախորդ կազմի գործունեության դադարման օրը:

3.5 Խորհրդի անհատական կազմի ձևավորման մասին տարածքային մարմնի հայտարարությունը հրապարակվում է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի պաշտոնական կայքում՝ Խորհրդի անհատական կազմի գործունեության դադարման տարվա մինչև փետրվարի 15-ը:

3.6 Օրենքով սահմանված սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպություններին, ինչպես նաև ֆիզիկական անձանց ներկայացվող՝ Համաձայնագրի 3.7 կետով սահմանված, պահանջները հրապարակվում են խորհրդի անհատական կազմի ձևավորման մասին տարածքային մարմնի հայտարարության մեջ, որում նշվում է նաև խորհրդին անդամագրվելու հայտագրման վերջնաժամկետը:

3.7 Հայտագրման համար ներկայացվող նվազագույն պահանջներն են.

3.7.1 սոցիալական աջակցության բնագավառում գործունեության փորձ:

3.7.2 սոցիալական ծառայությունների տրամադրման ծրագրերի իրականացում:

3.8. Խորհրդի անհատական կազմի ձևավորման մասին հայտարարության մեջ նշված վերջնաժամկետից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում տարածքային մարմինը օրենքով սահմանված սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների ներկայացուցիչների և Խորհրդի կազմում անդամագրվելու համար հայտագրված սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների ներկայացուցիչների և ֆիզիկական

անձանց տվյալները ներկայացնում է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին՝ Խորհրդի անհատական կազմը հաստատելու նպատակով:

3.9. Խորհրդի կազմում անդամագրվելու համար հայտագրված կազմակերպությունների և ֆիզիկական անձանց թիվը հիմնված է վեբ-կայքի վրա: Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետը՝ Խորհրդի կազմում ընդգրկվելու առաջնահերթությունը տալիս է այն կազմակերպությանը կամ ֆիզիկական անձին, որը սոցիալական աջակցության բնագավառում գործունեության ավելի երկար ժամանակահատվածի փորձառություն ունի և (կամ) սոցիալական ծառայությունների տրամադրման ավելի մեծ թվով ծրագրեր է իրականացրել (նում):

3.10. Խորհրդի կազմն ավելի վաղ ժամկետում կարող է վերանայվել Խորհրդի անդամ կազմակերպության կամ ֆիզիկական անձի Խորհրդի անդամությունից դուրս գալու կամ Խորհրդի նախագահի և (կամ) տարածքային մարմնի հիմնավորված կարծիքի դեպքում:

3.11. Խորհրդի նախագահը կամ տարածքային մարմինը Խորհրդի անհատական կազմի վերանայման հիմնավորված կարծիքը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի՝ սոցիալական հարցերով պատասխանատու ստորաբաժանմանը (այսուհետ՝ ստորաբաժանում)՝ Խորհրդի կազմում ներկայացված կազմակերպության ներկայացուցչի կամ ֆիզիկական անձի կողմից Խորհրդի աշխատանքներին մասնակցության վերաբերյալ: Ստորաբաժանումը հարցը քննարկում է կազմակերպության կամ ֆիզիկական անձի հետ: Կազմակերպությունը կարող է առաջադրել Խորհրդի անդամության այլ թեկնածու՝ տվյալ կազմակերպության անդամության մնացած ժամկետով:

3.12. Ստորաբաժանումը Խորհրդի անհատական կազմի փոփոխությունը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին՝ հաստատման:

3.13. Խորհրդի անդամ կազմակերպությունը կամ ֆիզիկական անձը ցանկացած պահի և սեփական նախաձեռնությամբ կարող է դուրս գալ Խորհրդի անդամությունից՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով ստորաբաժանմանը:

4. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Կողմերն իրավունք ունեն՝

4.1.1 ստանալ տեղեկություն իրականացվող ծրագրերի (տրամադրվող սոցիալական ծառայությունների) և առկա ռեսուրսների մասին:

4.1.2 ակնկալել անհապաղ աջակցություն Կողմերի հնարավորությունների շրջանակում, արտակարգ իրավիճակներում հայտնված անձի (ընտանիքի) խնդիրների լուծման հարցում:

4.1.3 առաջարկություններ ներկայացնել սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացի բարելավման նպատակով և ստանալ դրանց վերաբերյալ գրավոր (այդ թվում՝ էլեկտրոնային) պատասխաններ Կողմերից:

4.1.4 մասնակցել տեղական սոցիալական ծրագրերի մշակման, իրականացման, մոնիտորինգի և գնահատման աշխատանքներին:

4.1.5 միանալ սոցիալական համագործակցության ազգային մակարդակում ընդունված սոցիալական համագործակցության համաձայնագրին:

4.1.6 հայտագրվել Խորհրդի կազմում ընդգրկվելու նպատակով:

4.1.7 ներկայացնել առաջարկություն Խորհրդի քննարկման օրակարգում հարց ներառելու վերաբերյալ:

4.1.8 տարբեր, այդ թվում տեղական, սոցիալական ծրագրերի շրջանակներում կազմակերպել հանրային բնույթի միջոցառումներ (քննարկումներ, սեմինարներ, խորհրդակցություններ, բանակցություններ և այլն) և մասնակցել դրանց:

4.1.9 կազմակերպել աջակցող ցանցի տարածաշրջանային ֆորում, որում կարող են քննարկվել տվյալ տարածաշրջանի սոցիալական բնույթի էական նշանակություն ունեցող խնդիրներ:

4.1.10 դադարեցնել մասնակցությունը Համաձայնագրին:

4.2. Կողմերը պարտավորվում են՝

4.2.1 պահպանել օրենքով սահմանված՝ համագործակցության սկզբունքները:

4.2.2 իրազեկել Կողմերին՝ իր կողմից իրականացվող սոցիալական ծրագրերի (տրամադրվող սոցիալական ծառայությունների) և առկա ռեսուրսների մասին:

4.2.3 արագ արձագանքել յուրաքանչյուր իր հնարավորության շրջանակում՝ արտակարգ իրավիճակներում

հայտնված անձի (ընտանիքի) խնդիրների լուծման հարցում՝ համապատասխան Կողմի ահազանգի դեպքում.

4.2.4 մասնակցել համայնքների սոցիալական կարիքների վերահսման, ինչպես նաև դրանց համարժեք՝ տեղական սոցիալական ծրագրերի մշակման աշխատանքներին.

4.2.5 համագործակցել տարածքային մարմնի սոցիալական դեպք վարողի հետ՝ սոցիալական դեպքի վարման շրջանակներում.

4.2.6 իրականացնել կանխարգելիչ աշխատանքներ կյանքի դժվարին իրավիճակում չհայտնվելու, դրա պատճառների բացահայտման և վերացման ուղղությամբ.

4.2.7 համագործակցության շրջանակների ընդլայնման և կայացման նպատակով իրականացնել հանրության իրազեկման և տեղեկացվածության բարձրացման աշխատանքներ.

4.2.8 հավաքագրել և խորհրդին ներկայացնել սոցիալական ծրագրերի իրականացման մասին հանրային կարծիքը և դիրքորոշումն արտահայտող առաջարկություններ.

4.2.9 մոբիլիզացնել սեփական և հանրային ներուժը՝ ներկայացված առաջարկությունները տեղական սոցիալական ծրագրերում ընդգրկելու համար.

4.2.10 համագործակցության ընթացքում ցուցաբերել կառուցողական դիրքորոշում և անհրաժեշտ աջակցություն բոլոր համաձայնեցված հարցերի իրականացման առնչությամբ՝ նպաստելով գործընկերության զարգացմանը.

4.2.11 ապահովել հետադարձ կապը Կողմերի, ինչպես նաև հանրության միջև.

4.2.12 խորհրդի քննարկման օրակարգում հարց ներառելու առաջարկությանը կից ներկայացնել դրա հիմնավորումը, առաջարկվող հնարավոր լուծումները, մեխանիզմները և այլ անհրաժեշտ փաստաթղթեր.

4.2.13 մասնակցել խորհրդի ձևավորման, գործունեության զարգացման և ծավալման աշխատանքներին.

4.2.14 առաջարկություններ ներկայացնել աջակցող ցանցի մասնակիցներին՝ անհատական սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացի հայեցողական լիազորությունների շրջանակներում որոշումների կայացման համար.

4.2.15 պահպանել սույն համաձայնագրի դրույթների կատարումը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԱՐԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Կողմերը Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն են կրում Համաձայնագրով նախատեսված իրենց պարտավորությունները չկատարելու և(կամ) ոչ պատշաճ կատարելու համար:

5.2. Կողմերի՝ Համաձայնագրով նախատեսված իրենց պարտավորությունները չկատարելու և(կամ) ոչ պատշաճ կատարելու դեպքում խնդիրը կարող է քննարկվել Համաձայնագրի 4.1.9 կետով նախատեսված ֆորումի ընթացքում:

5.3. Կողմերի՝ խորհրդի կազմում ընդգրկվելու, բայց դրանց աշխատանքներին չմասնակցելու և(կամ) ոչ պատշաճ մասնակցելու դեպքում կիրառվում են Համաձայնագրի 3.10 և 3.11 կետերը:

5.4. Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը, համաձայնագրի դրույթների մեկնաբանման և (կամ) կիրարկման վերաբերյալ տարածայնությունները լուծվում են համատեղ՝ խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:

6. ԵԶՐԱՓՈՎԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1 Համաձայնագիրը միակողմանի ստորագրվում է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմերի սոցիալական աջակցության տարածքային գործակալության (բաժնի) պետի կողմից:

6.2 Համաձայնագիրը կազմված է հայերեն մեկ օրինակից, որը պահպանվում է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության տարածքային գործակալությունում (բաժնում):

6.3 Յուրաքանչյուր կողմին տրամադրվում է համաձայնագրի՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության տարածքային գործակալության (բաժնի) պետի կողմից վավերացված պատճենի մեկ օրինակ:

6.4 Համաձայնագրի րովանդակությունը տեղադրվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և

սոցիալական հարցերի նախարարության, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի պաշտոնական կայքում, տեղադրելով նաև համաձայնագրին միացած, ինչպես նաև մասնակցությունը հետ կանչած Կողմերի անունները, անվանումները և այլ տվյալները:

6.5 Սույն համաձայնագիրը յուրաքանչյուր Կողմի համար ուժի մեջ է մտնում միանալու պահից:

6.6 Կողմի մասնակցությունը Համաձայնագրին համարվում է դադարած Կողմի՝ մասնակցությունը հետ կանչելու մասին գրությունը (դիմումը)՝ տարածքային մարմին ներկայացնելու պահից:

7. ԿՈՂՄԻ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության Սևանի տարածքային գործակալության (բաժնի) պետ Լ. Պողոսյան

Կ. Տ.

« 23 » 05 2016թ.

